

Աերի հետ<sup>1</sup>: Բացի այդ, հայտնի է, որ զստ Խաչենի (Եւ շրջակա մի քանի գավառների-Ս.Ս.) ավանդույթի, ծնված որդիներից հատկապես ավագը կոչվում էր պապի անունով<sup>2</sup>: Այդ ամենի հետեւանքով Խաչենում մեծ տարածում են ստանում այլ գավառների տոհմերին բնորոշ անուններ, Եւ ընդհակառակը, շրջակա գավառներում ի հայտ են գալիս Խաչենին բնորոշ անուններ:

Խաղբակյան տոհմի պատմությունը առավել մանրակրկիտ ուսումնասիրության կարիք ունի:

**Խօհանաբերդ: Нововыявленные лапидарные надписи о роде Хахбакянов**

Слава Саргисян

Резюме

Находясь в ущелье реки Хаченагет, крепость Хоханаберд сыграла значительную роль при нашествии арабов, турок-сельджуков, монголов и других завоевателей.

На территории крепости имеется много историко-культурных памятников с еще не изученными древними надписями. Последние представляют большой интерес для изучения истории рода Хахбакянов.

**Khokhanaberd: newly revealed lapidary inscriptions about**

**Khakhbakyans family**

**Slava Sargsyan**

**Summary**

Being in the ravine of the Khachenaget River, the fortress of Khokhanaberd played a significant role during the invasions of the Arabs, Turk-Seljuks, Mongols and other invaders.

In the territory of the fortress there are a lot of historical and cultural monuments with ancient inscriptions, which have not been studied yet. The latter are of great interest for the study of the family history of Khakhbakyans.

## **ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐՎԵՍԻ ՀԱՆՁԱՐԸ\***

**(Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակի առթիվ)**

**Սովորատ Խանյան**

**Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

<sup>1</sup> Այսպէս, Խաչենի Գրիգոր իշխանը ամուսնացել է Համազասպյան Մամքան տիկնոց հետ, Խաղբակյան որդի Զաքուրը՝ Մամախայունի, Վասակ Խաղբակյանը՝ Մամայի հետ եւ այլն:

<sup>2</sup> Բ. Ուղրարյան, Խաչենի իշխանությունը, էջ 14:1:

\*Հողվածք ընդունվել է 07. 12. 12:

Հողվածք սուպագության է Երաշխավորել ԱրՊՀ հայ գրականության եւ լրագրության ամբիոնը:

### Կրու

Սայաթ-Նովան 300 տարեկան է: Այս տարեթիվը նշվում է ըստ սայաթ-Նովագիտության հիմնադիր Գ. Ախվերդյանի: Իսկ ըստ Պ. Սևակի՝ նա 290 տարեկան է: Միևնույն է, եթե աշխարհում մեծարվում է հանձարեղ աշուտքանաստեղծը, ընդգծվում նրա  $3 \times 100$  տարվա դեպի հավերժություն տանող ուղին, ապա մենք ևս միանում ենք նրանց, ովքեր հայ գրքի տպագրության 500-ամյա հոբելյանական միջոցառումների համապատկերի վրա ծածանում են նաև 300 թիվը՝ մեր ազգային հանձարի փայլատակումներից մեկը հանդիսացող մեծ երգչի հոբելյանը:

Սայաթ-Նովագիտությունը 160 տարվա ճանապարհ է անցել: Ստեղծվել են մի քանի տասնյակ ուսումնասիրություններ, մի քանի հարյուրի հասնող գիտական հոդվածներ, տպագրվել են նկարազարդ ալբոմներ, ցուցադրվել են կինոֆիլմեր, լույս են տեսել վեպեր, վիպակներ, չափածո երկեր և այլն, և այլն: Ասել է թե՝ անմահ աշուտքանաստեղծը որպես անհատականություն, ծեռք է բերել իրեն ծնող ժողովրդի համաժամանակյա դիմագիծը, ժողովուրդն էլ իր աստվածանվեր որդու հոգու երանգներով ներկայանում է քաղաքակիրք աշխարհին՝ միանշանակ հաստատելով այն ճշմարտությունը, որ ժողովուրդը ծնում է իր հանձարեղ զավակին, իսկ զավակը վերածնում է իրեն ծնող ժողովրդին:

Համաշխարհային մշակույթի պատմության մեջ քիչ չեն այն դյուցագումները, ովքեր ճամփա ընկնելով իրենց ազգային օջախներից, քայլում են դեպի համամարդկային հորիզոններ ու միասնաբար հնչեցնում մարդասիրության, խաղաղասիրության, հայրենասիրության, ազատասիրության, մարդու իրավունքների պաշտպանության, անհատի հուզաչխարիի գեղեցկության լուսավոր գաղափարներ: Նման հսկաներից է Սայաթ-Նովան, որը վաղուց միացել է առաջին մեծության աստղերի այն բոյլին, որի մեջ են Հոմերոսն ու Նարեկացին, Ֆիրդուսին ու Հյուգոն, Շեքսպիրն ու Գյորեն, Ռուսավելին ու Բայրոնը, Պուչկինն ու Թումանյանը, Հեմիգուեյն ու Իսահակյանը, Ուիթմենն ու Չարենցը և էլի շատ գերաստղեր:

Բերելով անմահների այս ոչ լրիվ անունները՝ կարևոր եմ համարում ընդգծել հետևյալ ճշմարտությունը: Աշխարհահօչակ մեծությունների հաղթարշավի մասին խոսք բացելիս երկրորդական պլան են մղվում նրանց կենսագրական մանրազնին տեղեկությունները, որոնցով հետաքրքրվում են միայն գրականության պատմությամբ առանձին գրաղվողներ: Դա բա-

ցատրվում է նրանով, որ մեծությունները լինելով կոնկրետ մի դարաշրջանի ծնունդ, քայլ առ քայլ դաշնում են գալիք սերունդների ժամանակակիցը, իրենց խորաթափանց ստեղծագործություններով պատասխանում այն հարցերին, որ հուզում են նորերին՝ համապատասխան նրանց աշխարհընկալման ու կենսահայեցողության երանգների:

Այսպես, դիմենք 300-ամյա Սայաթ-Նովային, թերթենք և ըմբոշխնենք այն պատկերները, որոնց մեջ դատողն ու տառապողը, ապրողն ու փիլիստիփայողը, սիրողն ու տառապողը, երազողն ու արարողը ես եմ, դու ես, նա է, մենք ենք՝ բոլորս: Իսկ այս զգացմունքներին ու խոհերին արդեն երեք դար է, ինչ պատասխանում է հենց ինքը՝ մեծն Սայաթ-Նովան:

Հայտնի է, որ Սայաթ-Նովան ստեղծագործել է հայերեն, Վրացերեն, թուրքերեն և երեք լեզուների պատկերային հյուսվածքների աշխարհում ցուցաբերել է հավասարապես բարձր մակարդակ:

Սակայն այդ նկատելի հավասար մակարդակը վերաբերում է տվյալ լեզուների իմացությանը: Գոյություն ունի պոեզիայի անմիջականության և փիլիստիփայության մի հիմնախնդիր, որ առավել նկատվում է Սայաթ-Նովայի մայրենի լեզվով ստեղծած տաղերում: Ժամանակին քննարկելով այդ հարցը, հրչակավոր սայաթնովագետ Մորուս Հասրաթյանն ընդիհանրացրել է. «Վրացերենում և աղրբեջաններում (թուրքերենում-Ա.Խ), Սայաթ Նովան կանգնում է մեր առջև որպես սիրաբան ու հուզարաթապ, ազնիվ ու անմիջական, իմաստուն ու բարոյախոս մի աշուղ բանաստեղծ, որպես ժամանակի ընթացքում չնորացվող շատ շնորհալի և մշտապես սիրելի բանաստեղծներից մեկը: Իսկ հայերենում նա անկրկնելի է իր անմիջականությամբ ու պարզությամբ, անօրինակ է իր նրբությամբ ու գունագեղությամբ, բացարիկ է հոգու և մտքի, աչքի և լեզվի ներդաշնակությամբ, մի պարզ, գերող կախարդ, մշտապես բարախուն ջերմ սիրտ, ժողովրդական մի խւկական հանձար: Հայ գրականության մեջ մարդու և աշխարհի հետ այդ լեզվով և այդպես են խոսել հատկապես Նարեկացին ու Լաստիկերտցին, Աբրովյանն ու Ալիշանը, Թումանյանն ու Խահակյանը, Դուրյանն ու Տերյանը, վերջապես այդպես է մրմնջացել դարերով տառապած հայ ժողովուրդը հայ կնոջ և հայ պանդուխտի շուրթերով<sup>1</sup>»:

Տվյալ դեպքում օրինակները կբերեն հայերեն նրա խաղերից, և ընթերցողը կհամզովի, որ մարզարե-երգիչն արտահայտել է բոլոր ժամանակ-

<sup>1</sup> Սայաթ-Նովա, Խաղերի ժողովածու, Մ.Հասրաթյանի խմբագրությամբ, Երևան, 1963, էջ XIX:

ների մարդկային գործունեության բազմաշերտ ու խորքային կենսափիլի-սովորությունը:

Շաբաթներ առաջ գրական մի հավաքի ժամանակ ընկերներով տրտնջում էինք այս երևոյթից, որ նոսրացել է գեղարվեստական գրականություն ընթերցողների թիվը, միաժամանակ նշում ԱՎ. Իսահակյանի խոսքը. «Ես ձեզ ասում եմ՝ կզաք ոգու սով»: Զրուցակիցներից մեկը, ի հաստատումն այդ կանխազգացումի, արտասանեց Սայաթ-Նովայի հետևյալ տողերը «Քամանչա» հանրահայտ տաղից.

Ամեն սազի մեջըն գոված դուն թամամ տան իս, քամանչա,  
Նաքազ մարթն քիզ չի տեսնի, դուն նըրա պան իս, քամանչա,  
Ղանտ արա՝ էլ լավ օրերու էղիվըն հասնիս, քամանչա,  
Քիզ ինձնից ո՞վ կանա խոյի, աշուղի բան իս, քամանչա:  
Մեր ընկերներից մեկն էլ ավելացրեց.  
Օչով դիմեթըն չի գիրի - լալ ու ալմասն իս, քամանչա:

Զրուցը շարունակվեց: Եվ ընդգծվեց, որ ամեն դեպքում Սայաթ-Նովան չի դավաճանել ինքն իրեն, արարել է Աստծո ընծայածի իր անմրցակից տաղանդի ուժով, արդարացրել «խալխի նոքար» լինելու իր պարտականությունը.

Ծատ տղիսուր սիրտ կու խնդացնիս, կու կըտրիս հիվընդի դողըն,  
Յիկ քաղցր ծայնըտ վիր կոնիս, բաց կուշի հիղըտ խաղողըն.  
Խալխին էս իլթիմազն արա՝ ասին. «Աւրի քու ածողըն»,  
Քանի սաղ է Սայաթ-Նովէն, շան բան կու տեսնիս, քամանչա<sup>1</sup>:

Քամանչան, որ խորիդանշում է հանձարի արվեստը, իրոք, շատ բան տեսավ ստեղծագործական բարդ ու դժվարին ճանապարհին, ինչպես ինքն է բնութագրել՝ «Ճորտի դարում»: Իսկ հաշտվել է, արդյոք, մեծ արվեստագետը «Ճորտի դարի» Ճորտության հետ: Իհարկե, ոչ: Հենց այս «ո՛չն» է, որ Սայաթ-Նովային բարձրացրել է իր դարաշրջանից, միացրել երկրագնդի չորս ծալքերում բոլոր այն հումանիստ մեծություններին, ովքեր իրենց խոսքով, երգով, նույնիսկ կյանքով մարտնչել են չարերի ու չարիքի դեմ, երազել մարդու արժանապատվության հարգումն ու պահպանումը: Վճռորոշ կանգնելով արդարության պատվաբեր դիրքերում, նա կտակել է դարերին.

Աշուղի լիզուն բջիբուլ է, օրինանք ունե, նալար չը կա,  
Ծահի մոդ խոսկն անց կու կենա, սըպանելու ջալլար չը կա.

<sup>1</sup> Սայաթ-Նովա, Խաղողի ժողովածու, ԱՀարաթյանի խմբագրությամբ, Երևան, 1963, էջ 5-6:

*Հեքիմու դատաստան չը կա, մե դըրուստ աղալաթ չը կա,  
ՄԵ մարթ չը կար՝ ազատի էր, Սայաթ-Նովեն դարին մընաց<sup>1</sup>:*

Իր դարի զավակը մնալով հանդերձ, Սայաթ-Նովան համոզված էր, որ լուսի և մթան պայքարում լուսի հաղթանակի համար քաջազուններ են պետք, որ կյանքը հերոսամարտի ասպարեզ է, որին պետք է նվիրումով մասնակցեն ժողովրդածին դյուցազունները.

*Վարթըն ասաց. «Իմ բըլրուսին ալ պուճպուճեն վո՞նց կու խափե.  
ԹԵ խիլք ունիս, դարիք բըլրու, Է՛ քու բաղի ճամփեն չափե»:  
Քանի գուգե քընած տիղըն իր թըշնամին կուռըն կապէ,  
Է՛ի վիրչումըն մեյդանըն Ռոստոմի Զալուն մընում է<sup>2</sup>:*

Սայաթ-Նովան ասես կռահել է իր մայր ժողովրդի գալիք գոտեմարտերը և խորհուրդ է տվել՝ երբեք չխարվել թշնամուց, քանզի գալու է հատուցման պահը՝ ժողովրդի անձնուրաց որդիների մասնակցությամբ: Եվ օրինակ է բերում պարսիկ հնադարյան աշխատավոր ժողովրդի ստեղծած «Չահնամե» էպոսի արդարամիտ հերոսին՝ Ռուստամ Զալին: Բանաստեղծ-աշուղի մարգարեական խորհրդի իրականացումը հենց մեր ժողովրդի մղած Արցախյան ազգային-ազատագրական գոտեմարտն էր, ուր մեր քաջազունների կյանքի գնով փրկվեց մեր ժողովրդի ազգային արժանապատվությունն ու անկախ, ազատ ապրելու իրավունքը:

Դեռ ավելին: Մի քանի տարի է, ինչ Ադրբեջանի Պուճուր խան Իլիան Ալիկը իր բարբաջանքներով ոչ միայն սուր է ճոճում Արցախի և Հայաստանի Հանրապետության դեմ, այլև ցինիկորեն հայտարարում է, որ հայերը եկվորներ են, որ Երևանը և հայոց բոլոր քաղաքներն ու բնակավայրերը կառուցված են «ադրբեջանական» հողերի վրա: Սա ոչ միայն ծիծաղելի է, այլև վրդովեցուցիչ, որովհետև խելքը գլխին ոչ մի աղանորդի չի կարող հորինել նման կեղծիք՝ շրջանցելով համաշխարհային պատմագրությունը, որտեղ սևով սպիտակի վրա ոչ միայն գրված է հայ ժողովրդի գոյության և հզոր հարևանների հետ փոխհարաբերությունների մասին, այլև գծագրված են քարտեզները, որտեղ սելջուկ-թուրքերի անունն անգամ չկա:

Սայաթ-Նովան իր տաղերում մեկ անգամ չի անդրադարձել ու խարազանել գայլային բնավորություն և ախորժակ ունեցող տիրակալներին:

<sup>1</sup> Սայաթ-Նովա, Խաղերի ժողովածու, Մ.Հասրաթյանի խմբագրությամբ, Երևան, 1963, էջ 49:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 69:

Այս առումով ևս մեծ բանաստեղծը դրսենորել է մարգարեական իր կրահումները, որ արդիական հնչողություն ունեն: Այսպես, «Գելն ու չոբանը» տաղում մեծ երգիչը ներկայացնում է նենգամիտ գայլին և նրա հոխորտանքներին համարձակորեն պատասխանող հովվին:

Գելըն ասավ. «Վուր ամպը գա ծըմակին,  
Ակրեքըս կու գըցիմ դոչի դըմակին...  
Կեսը կու խիխտիմ, կեսն էլ իմ քամակին  
Մե-մեկ, մե-մեկ սարի ծերին շանց կուտամ:

Չորանն ասավ. «Գիղիս անտեր մա՞լ ունիմ,  
Ճըտիտ համա էրկըթ կըրկալ ունիմ.  
Թե վուր ճանգըս ընգար, յիս իդրալ ունիմ,  
Կոմբիս տակին կընձկընձալը շանց կուտամ»<sup>1</sup>:

Դժվար չէ նկատել, որ հովվի պատասխանը բոլոր ժամանակների, ինչպես և մերօրյա պայքարում գգուշացնում է նաև Աղրբեջանի կառավարող շրջաններին, որոնք վարում են անհեռանկար ու անհավասարակշիր քաղաքականություն հարևան ժողովրդի հանդեպ: Սայաթ-Նովայի արհական ծոռները Շուշիի բարձունքներում իրենց իմաստուն աշուղ-բանաստեղծի խորհրդով պատրաստ են անասունների վզի մետաղե կապով (կրկալով) հաջողությամբ (իդրալով) մահակի (կոմբլի) ուժով ստիպելու, որ շան նման կընձկընձան:

Սայաթ-Նովայի պոեզիան կյանքի փիլիսոփայությունն է: Իսկ կյանքը վերացական հասկացողություն չէ: Այն մարդն է իր ներաշխարհի բազմաշերտ երանգներով: Իր սիրային տաղերում Սայաթ-Նովայի նկարագրած գոզալը ներկայացվում է որպես Աստծո ստեղծած բնության գլուխգործոց, ինչպես երգիչն է ընդգծում. «Թարիփըտ դավթար իմ արի, փիլ պիտի, վուր գիրքըն տանե»<sup>2</sup>:

Այս առումով, բնութագրական հավերժող խոսք է՝ Մեծ Լոռեցու դիտարկումը՝ «Սայաթ-Նովայի երգերի բնավորությունը» հիդվածում, գրված 1913 թվականին: «Սայաթ-Նովան,- գրել է նա,- մի հոյակապ սիրահար է, բռնված ու բռնկված սիրո հրդեհով, նրա լուսի տակ էլ նկատում է աշխահրքն ու իրերը, զգում է, որ էրկում, վերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, անչար ու անաչառ, վեհ ու վսեմ, որպես

<sup>1</sup> Սայաթ-Նովա, Խաղերի ժողովածու, ԱՀասրաթյանի խմբագրությամբ, Երևան, 1963, էջ 76:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 17:

աշխարհի ու մարդու մեծ բարեկամը, հաստատուն սիրով և դեպի էն «զալումը», որ իրեն կրակ տվեց ու միշտ մնաց անտարբեր, և դեպի նրանց, որոնք չորս կողմից տաքացան ու իրձվեցին էն կրակով, որի մեջ երվում էր ինքը և դեպի նրանց, որոնք հազար ու մի տեսակ իրեն վշտացրին կյանքում: Զայրացավ, բայց երբեք չչարացավ, ցավեց բայց երբեք չանձեց... նրա սերը նման է ընկերության, ընկերությունը՝ սիրո<sup>1</sup>:»

Անդրադառնալով Սայաթ-Նովայի սիրերգությանը՝ կարող ենք կրկին հաստատել, որ նրա անունն իր տեղն է գտել համաշխարհային մեծագույն սիրերգակաների շարքում՝ որպես ինքնատիպ արվեստագետ: Դիմելով արևելյան աշուղական պոեզիայի հարուստ գանձարանին՝ նա ավելի է կատարելագործել նրա ժանրերը և կենսափիլիսոփիայական խորօսը, և բնապատկերային նրբերանգներով: Այստեղ կարևոր են համարում ընդգծել մեծ երգիչ սիրո առարկայի հիմնախնդիրը, որը դարձել է քննարկման առարկա սայաթնովագիտության մեջ: Ոմանք հաստատում են, որ նրա Սերը եղել է Վորաց թագավոր Հերակլ Երկրորդի քոյրը՝ Աննան, ոմանք ծգտում են Ժխտել այդ ճշմարտությունը: Սակայն Սայաթ-Նովայի սիրերգությունը անձնավորել և Աննայի հանդեպ ունեցած զգացումները ներկայացնել որպես երգչի կենսագրություն, կլինի միակողմանի, երգարվեստի էությունը կաղապարող թեթև ընդհանրացում: Հարցին պետք է մոտենալ արվեստի պայմանականության դիրքերից, արվեստագետի վառ երևակայության սահմաններից, ընդհանրացման ուժով ժամանակների պատնեշները շրջանցելու և սերունդների սրտի խոսքը դառնալու հզորությունից: Նման մոտեցումը սայաթնովագետին կիանգեցնի ճշմարտացի մի եզրակացության, որ Սայաթ-Նովան Աննայի հանդեպ ունեցած աստվածային սիրո մեջ տեսել է մարդուն երջանկացնող նվիրյալ սիրո գաղափարը, սեր, որին, ցավոք, չէր կարող հասնել ինքը՝ վառվող, տառապող, չվայելող մեծ սիրահարը՝ Սայաթ-Նովան: Հենց դրա շնորհիվ է, որ յուրաքանչյուր ոք հավերժախոս աշուղբանաստեղծի երգերում առաջին հերթին ինքն իրեն է տեսնում, իր անունից դիմում սիրեցյալին, երբեք չմտածելով, որ այդ զերմացնող արտահայտությունները պատկանում են 18-րդ դարի բանաստեղծին: Պոեզիայի հավերժական ուժի մասին են խոսում հանձարեղ գուսանի երգերը:

<sup>1</sup> Հ.Թումանյան Երկերի ժողովածու 4 հատորով, հ.4, Երևան, 1969, էջ 185-187:

Երևի շատերն են լսել սիրեցյալի խոստովանությունը Սայաթ-Նովայի բնութագրումներով. «Չկա քիզի նման... Դուն իս աննման»<sup>1</sup> կամ «Աշխարհիս շըվաք իս անում՝ սալք ու չինար իս, գովելի»<sup>2</sup>: Իսկ կարուտից խենթանալու պահին խոստովանել է. «Ծովի պես ուրդան իմ տալիս, գրժվիլ իմ Արագի նըման»<sup>3</sup>: Քանի՛-քանի անգամ է հնչել այս քառատողը սիրոցավի մեջ տառապողի շուրթերին և այսօր էլ հաճախակի է հնչեցվում.

*Արի, բջլրու, խոնի բարդն:*  
*Օխնըվի քու էկած սարըն,*  
*Քի Վարթն էրից, ինձ իմ յարըն,-*  
*Դու մի՛լաց լի, յիս իմ լալու<sup>4</sup>:*

Իսկ երբ սիրեցյալը ցանկացել է ընդգծել իր սիրած էակի հանդեպ ունեցած անսպառ կարուտի զգացումը, բացականչել է. «Աշխարս աշխարով կըշտացավ, իմ սիրտըս քեզնից սով մընաց»<sup>5</sup>: Կամ՝ «Դուն կըրակ, հաքածըտ կըրակ, վո՞ւր մե կըրակին դիմանամ»<sup>6</sup>:

Կերլուծելով Սայաթ-Նովայի տաղերը, ականավոր հայագետքանասեր Մ.Աբեղյանը նկատել է, որ զստ անմահ երգչի. «Սերը պետք է հաստատ լինի, և մարդ մի հատիկ յար ունենա: Այդպիսի սեր ունենալու համար պետք է երկուսն իրար հավասար լինեն: Այդպիսի յարն անգին է, որից ոչ մի բանով բաժանվել ու հեռանալ չի լինի, ոչ մարգարտով ու ալմասով, ոչ մահով, ոչ ահով և ոչ շահի հրամանով»<sup>7</sup>:

Սիրո փառաբանումի պատկերավոր արտահայտություններն այնքան շատ են Սայաթ-Նովայի երգերում, որ կարելի է կազմել թևավոր մտքերի մի հանրագիտարան՝ մարդկային երջանկությունն ու ցավի սփոփանքը հավերժացնող սիրո մասին:

Սայաթնովագետները գրեթե միաձայն անմրցակից աշուղին համարում են սիրո մեծ երգիչ: Դա Ճշմարիտ է: Սակայն Սայաթ-Նովան ինչքան սիրո երգիչ է, այնքան էլ մեծ մտածող է, որի խոհափիլիխոփայական, խրատական, հումանիստական, ազատասիրական, աշխատասիրության, բարության, համեստության և այլ գաղափարներն արծարծող երգերը եզակի գործեր են համաշխարհային պոեզիայի պատմության մեջ: Ուստի պետք է

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 8:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 17:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>4</sup> Հ.Թումանյան Երկերի ժողովածու 4 հատորով, հ.4, Երեւան, 1969, էջ 19:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 37:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 51:

<sup>7</sup> Փ. Հ. ՕՌայ, Պ. Հ. Պատրիարք, 1970, էջ 540:

նկատի առնել այն երևույթը, որ նրա խոհափիլիստիայական խորհուրդներն արտահայտված են ոչ միայն կոնկրետ թեմատիկ գործերում, այլև սիրո մոտիվներում: Ասել է թե՝ Սայաթ-Նովան բացահայտել է երևույթի փիլիստիայությունը: Այս առումով Աննային նվիրած գործերը դարձել են ոչ թե Աննաերգություն, այլ սիրերգություն, այսինքն՝ մարդերգություն: Դիմենք նրա գանձերին: Տեսեք, թե մարդասիրական, ընկերասիրական անձնուրացության ինչպիսի առինքնող տողեր են ծիածանված սիրային մի երգի մեջ.

*Դարդ մի անի, ջան ու ջիզար, միթքըտ դիվաց չը տեսնե.*

*Աչկ խավրի, անգամ խովանա՝ էրեսըտ թաց չը տեսնե:*

*Վունց արեգագն շուղկը տա, վունց լուսինը լուս անե.*

*Ակալ քու տեսնողըն միոնի՝ քիզ զիսիրաց չը տեսնե<sup>1</sup>:*

Սայաթ-Նովայի սերը մաքրագործող, թևավորող, խրատող, ազնվացնող աստվածային զգացում-խորհուրդ է: Եսասիրության, Եսապաշտության նշույլ անգամ չկա նրա սիրերգության մեջ: Ընդհակառակը, նրա քնարական հերոսը դաշնում է մարդուն ճիշտ ճանապարհի բերող ինքնօրինակ.

*Գուգիմ՝ ումբրը հենց անց կացնիմ՝ օրըս մունաթ չը քաշե.*

*Թեգուզ հազար դարդ ունենամ՝ դարըս մունաթ չը քաշե.*

*Դաստ անիմ, բարու հանդիրիմ՝ չարըս մունաթ չը քաշե.*

*Գըլուխըս չարեն ռադ անիմ՝ սարըս մունաթ չը քաշե.*

*Էրեսըս հայալու պահիմ՝ արըս մունաթ չը քաշե<sup>2</sup>:*

Դրանով հանդերձ, Սայաթ-Նովան մատնացույց է անում խրատողի իր նվաճած գանձերը, որոնցով իսկ, մի կողմից ընդգծում է հպարտանալու իր ազնիվ իրավունքը, մյուս կողմից՝ իր խրատը քարոզ չդարձնելու միտումը, որովհետև նա սովորական երգիչ էր, այլ հայտնություն՝ օծված ու օրինված Աստծու աջով: Ահա այդ օրինական ինքնահաստատումը.

*Մե բիուրս փոռագի ասլաս է, տալիս է շողը ու շափաղաթ.*

*Մե բիուրն զար-դալամքարի, տիղ ունի վունցոր մաքաղաթ.*

*Մե բիուրս Զինումաշինին կու առնե թամամ՝ փարաղաթ.*

*Մե բիուրն ենգիրումյա է, մե բիուն՝ փաչայի խալաթ,-*

*Վունց ձնիլ գուգե, վունց կըտրիլ՝ կարըս մունաթ չը քաշե<sup>3</sup>:*

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ., Երևան, 1970, էջ 16:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 27:

<sup>3</sup> Նոյն տեղում:

Այսպես, մեծ աշուղ-բանաստեղծի սիրային երգերը համեմված են մարդուն մարդ պահող, քրտնաթոր վաստակով պատվի արժանացնող, կյանքը հրաշալի գործերով գեղեցկացնող սրբազան խոհերով ու խորհուրդներով։ Եթե կարող են լինել գրքասերներ, որոնք նշեն, թե իբր Սայաթ-Նովան հայրենիքին նվիրած երգեր չունի, չարաչար սիսալված կլինեն։ Հայրենիքի հանդեպ ունեցած սիրո, նրա գրկում ապրելու և նրանում հոր դառնալու աստվածահաճո խնդրանք ու ցանկություն է Հերակլ թագավորին ուղղած տաղի վերջին ընդհանրացումը. «Սայաթ-Նովու գերեզմանըն Հինդ, Հարաշ, Արաք մի՛ անի»։ Կամ՝ «Մեռնելուս համա չին հոքում, ցիղի համա ին լալի»<sup>1</sup>։ Սայաթ-Նովան հայրենասիրությունը տեսել է առաջին հերթին մեծատառով սկսվող մարդու լինելության մեջ։ Այս դիտարկումի հետքերով բավական է բերել միայն նրա երգերից մեկի կիզակետային տողերը, որոնք քրիստոնեական բարոյահոգեբանական դաստիարակության պոետական խտացումներ են.

...Հայա սիրե, աղաք սիրե, ար սիրե...  
 ...Աստված սիրե, հոքի սիրե, յար սիրե...  
 ...Գիր սիրե, դալամ սիրե, դավթար սիրե...  
 ...Խրատ սիրե, սաքքը սիրե, շար սիրե...  
 ...Աղկատ սիրե, դոնաղ սիրե, տար սիրե...  
 ...Վանք սիրե, անապատ սիրե, քար սիրե...<sup>2</sup>

Սայաթ-Նովայի պոեզիան մի ամբողջ դարաշրջանի՝ 18-րդ դարի գեղարվեստական ամենաբարձր ու հավաստի վավերագրությունն է, որտեղ ինչպես կախարդական հայելում, արտացոլված են Ճորտատիրական կացութածկի արատներն ու դրանց արտահայտությունը մարդկային փոխհարաբերություններում։

Վուրտիդ հարսնիք, վուր տիղըն սուք, վուր տիդ սոյքաթ խաղ է զլում,  
 Վուր տիդ ժամ, վուր տիդ պատարաք, վուր տիդ սիրով տաղ է զլում,  
 Թե վուր հոքուտ կամքն իս անում, մարմինտ բեղամաղ է զլում՝  
 Վուր մե դարդին կու դիմանաս, դուն ջըրատար Սայաթ-Նովա<sup>3</sup>:

Ժողովրդի ցավն ու սուզը իրենը համարեց ժողովրդի ազնիվ, հանձարեղ զավակը՝ իր կրակված սրտի գեղումները հանդիսացող երգաշարին ավելացնելով.

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 52:

<sup>2</sup> Ս. Աբեղյան, Երկեր, հ. Դ., Երեւան, 1970, էջ 28:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 53:

Ով տեսնում է, էս է ասում. «Վայ քու դարին, Սայաթ-Նովա,  
Համաշա քիզ պիտինք տեսնի, աչկըտ արին, Սայաթ-Նովա,  
Ինչո՞վ չելավ, չըռաստ էկար մե լավ յարին, Սայաթ-Նովա,  
Ումբրըս էրազի պես գրնաց՝ ծառըս չըխերած գիտենաք<sup>1</sup>:

1759 թվականին, Երկրորդ անգամ Հերակլ Երկրորդի պալատից Սայաթ-Նովան հեռանալուց հետո էլ Երբեք ու Երբեք չի Երկատվել, քանզի նա զգացել է, որ անազնիվ ու ագահ թափանքերը Երրուսէ չեն ներելու իրեն, ամեն կերպ ձգտելու են հաշվեհարդար տեսնել իր հետ՝ նրանց քննադատելու և ծաղրելու հետևանքում: Պալատից հեռանալուց հետո Սայաթ-Նովան ժողովրդի դարավոր անբիծ արժանապատվության զգացողությամբ հղիացած ազնվականներին դիմել է հետևյալ խարազանող խոսքով.

Զեռը վի կալ, վաղ մարդութին չիմ ուզում,  
Էս աշխարում վարթամութին չիմ ուզում,  
Վաղ բան ասիլ, յա վադութին չիմ ուզում,  
Յիս մարդ մարդ իմ՝ նամարդութին չիմ ուզում,  
Յիս ռամիկ իմ, թափադութին չիմ ուզում<sup>2</sup>:

Համաշխարհային փիլիսոփայական քնարերգության գլուխգործոցների շարքում իր տեղն ունի Սայաթ-Նովայի «Աշխարըս մե փանջարա է...» տաղը: Ժողովրդական կենսափիլիսոփայության լեզվով մեծ գուսանը ներկայացրել է կյանքի հարափոփոխ ընթացքը միայն իր արվեստին հատուկ խորաթափանցությամբ ու պատկերավորությամբ: Յուրովի արտահայտելով իր դժգոհությունը ժամանակի դաժան օրենքներից ու մարդկային անհավասար փոխհարաբերություններից՝ Երգի մեծագույն վարպետոց ճշացել է.

Աշխարըս մե փանջարա է,- թաղերումեն բեզարիլ իմ,  
Մըտիկ տըվողըն կու խուցվի,- դաղերումեն բեզարիլ իմ,  
Երեգ լավ էր, կանց վուր էսօր,- վաղերումեն բեզարիլ իմ,  
Մարդ համաշա մեկ չի՛ ըլի,- խաղերումեն բեզարիլ իմ<sup>3</sup>:

Թաղերից, դաղերից, վաղերից, խաղերից բեզարելու գաղափարը բանաստեղծական արտահայտամիջոցներ են, ու դրանցով մեծ Երգիչը քննադատել է դարաշրջանի անօրինությունները, որոնց հետ Երբեք չի հաշտվել:

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 75:

<sup>2</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ., Երեւան, 1970, էջ 128:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 70:

Սայաթ-Նովան աշխարհի մի շարք մեծությունների պես ստիպված է եղել ընդգծելու աստվածանվեր իր շնորհքն ու կարողությունը, ապագայի հանդեպ ունեցած իր հավատը: Հերակլ Երկրորդի անարդարացի վերաբերմունքի արդյունքում, երբ Սայաթ-Նովան հեռացվել է արքունիքից, երբեք չի վիատվել, ընդհակառակը, բարձրածայնել է.

*Ամեն մարդ չի կանա խըմի՝ իմ ջուրըն ուրիշ ջըրեն է,*

*Ամեն մարդ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գըրեն է,*

*Բունիածն ավագ զիմանաս, քարափ է, քարուկըրեն է...<sup>1</sup>*

Հիրավի, Սայաթ-Նովայի երգարվեստի հիմքը և ամուր է, և թևավոր: Այն ճեղքելով դարերի բոլոր արգելքները, ճախրել է՝ ժողովրդի ոգուն ձուլված, որովհետև խոսել է մարդու և մարդկության ցավերի ու հույսերի, սիրո տառապանքի ու քաղցրության մասին, որոնք ուղեկցել և ուղեկցելու են կյանքին: Դրա մեջ է կայանում Սայաթ-Նովայի ստեղծագործության հավերժական գաղտնիքը: Հենց դրա շնորհիվ է նա դարձել հավերժի ձամկիորդը:

Гений народного песенного искусства  
(К 300-летию со дня рождения Саят-Новы)

Сократ Ханян

Резюме

По решению ЮНЕСКО в 2012 году во всем мире отмечалось 300-летие со дня рождения великого армянского ашуга-поэта Саят-Новы.

Данная статья посвящена философии поэзии бессмертного художника.

Саятнововедение в основном считает Саят-Нову певцом любви. Автор данной статьи конкретными примерами доказывает, что творчество Саят-Новы насыщено философской осмысленностью жизни.

Отсюда и вытекает многогранность его поэзии, где самобытными поэтическими образами воспеты темы божественной любви, трудолюбия, патриотизма, свободолюбия, братство народов и т. д.. Ярким примером этого является и то, что поэт свои песни создал и воспевал на разных: армянском, грузинском, тюркском, иногда и персидском, арабском языках.

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 20:

Genius of Folk Song Art  
(to the 300 anniversary since the birth of Sayat-Nova)  
Sokrat Khanyan  
Summary

By UNESCO in 2012, around the world celebrate the 300-th anniversary of the birth of the great Armenian poet-ashug Sayat Nova.

This article is devoted to the philosophy of the immortal poetry of the artist.

Sayatnovevedenie basically considered Sayat Nova as a singer of love.

The author has specific examples proving that creativity of Sayat Nova full of philosophical understanding of life.

This implies the complexity of his poetry, where the distinctive poetic images glorified theme of divine love, hard work, patriotism, freedom, brotherhood of people, etc.

A striking example of this is the fact that poet has created the songs and sang at various Armenian, Georgian, Turkish, and sometimes Persian and Arabic.

### ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇՈՒՇԻՆ\*

#### ՕֆելյաԲաբայան

Բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,

ԱրԴՀ

2012-ին լրամում է հայ գրատպության 500-ամյակը. հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտը հայերեն առաջին գիրքը՝ «Ուրբաթագիրքը», տպագրել է 1512թ. Վենետիկում: Տոնակատարությունը սկսվել է Վենետիկի սուրբ Ղազար կղզուց և կշարունակվի ողջ տարվա ընթացքում: XIX դարի երեսունական թվականներին տպարան է բացվել նաև Շուշի քաղաքում:

Տպագրության գյուտը կապվում է Հովհան Գուտենբերգի հետ, որը 1455թ. գերմանական Մայնց քաղաքում հրատարակել է առաջին գիրքը: Այդ հայտնագործությունը այնուհետև տարածվել է իտալիայում (1465), Իռլանդիայում (1465), Շվեյցարիայում (1468), Չեխիայում (1468), Ֆրանսիայում (1470), Լիհաստանում (1473), Անգլիայում (1474), Դանիայում (1482), Շվեդիայում (1483), Պորտուգալիայում (1487) և այլն: Եվրոպական երկրներին ու ժողովուրդներին ավելանում են հայերը: Բայց հայ-